«Գեղեցիկ Մարօն կբժշկէ քեզ».... ասաց Սագօն. նրա խօսքը ճշմարիտ էր, թէեւ նա արտասանեց այնպիսի դառն, հեգնական ժպիտով:

Ես կրկին գլուխս դրեցի բարձի վրայ եւ նայում էի պատուհանից ներս ծագած շողին, որի մէջ խաղում էին միլիոնաւոր մանրիկ փոշիներ գոյնզգոյն փայլումներով: Ահա՛ ինչ է նշանակում լոյսը, մտածում էի ես, չէ՞ որ այս սենեակի ամբողջ բովանդակութիւնը պարունակում է իր մէջ այսպիսի փոշիների մի ծովակ, բայց նրանք չեն երեւում օդի աղօտութեան մէջ, իսկ լոյսի այս նեղ ժապաւէնի մէջ բոլորը երեւում են: Բայց եթէ խաւար լինէր, — ես ոչինչ չէի տեսնելու, մինչեւ անգամ ամենախոշոր առարկաները: Ա՛խ, ի՞նչ լաւ բան է լոյսը, որպէս բաց է անում նա մարդի աչքերը եւ զօրութիւն է տալիս նրա տեսութեանը: Չէ՞ որ միեւնոյնն է լինում եւ կեանքի մէջ, — մի ժողովրդի, մի ազգի եւ ամբողջ աշխարհի կեանքի մէջ: Երբ որ տիրում է մտաւոր խաւարը, մարդիկ չեն տեսնում իրանց ամենախոշոր թերութիւնները. նրանք չեն նշմարում այն ճանապարհի ուղղութիւնը կամ ծռութիւնը որով գնում են. նրանք չեն նկատում այն խոչընդոտները, որ ամէն անգամ նրանց ոտքին է դիպչում եւ ճակատի վրայ վայր է գցում. — նրանք ոչինչ չեն տեսնում, միայն խարխափում են մոլորութեան մէջ...

Յիշեալ մտախոհութիւնները ինձ հասցնում էին այն եզրակացութեանը, թէ բոլորովին անյաջող կ'անցնէր Կարօյի ձեռնարկութիւնը. նա չէր կարող մի ժողովուրդ, որ ապրում էր խաւար մթնոլորտի մէջ, կանգնեցնել շիտակ ճանապարհի վրայ եւ նրա ընթացքին անմոլոր ուղղութիւն տալ: Պէտք էր նախ եւ առաջ փարատել խաւարը, եւ ժողովուրդն ինքն իրան կը գտնէր իր ճանապարհը...

Արդեօք այսպէ՞ս էի մտածում ես. միթէ՞ այս ճշմարտութիւններն էի կարդում արեւի այն լուսաւոր ժապաւէնի մէջ, որ ներս էր շողացել իմ քնարանի պատուհանից: — Ո՛չ, ես ոչինչ չէի տեսնում նրա մէջ, բացի փոքրիկ փոշիներից. նրանք եւս շուտով ձանձրացրին ինձ: Երեսս շուռ տուի, իմ ուշադրութիւնը գրաւեց ախտաբորբոք ճնճղուկը, որ իր զոյգի հետ պատուհանից ներս թռան սենեակի մէջ: — Նրանք մի քանի շրջաններ գծեցին իմ դատարկ քնարանում, յետոյ նստեցին միմեանց մօտ, սկսեցին քաղցր սիրախօսութիւններ անել: Մինչ այս զուարճութեան մէջ էին, ներս թռաւ մի այլ ճնճղուկ-արու, նա մօտեցաւ նախկին հերոսի սիրուհուն. նորեկի կողմից մի այսպիսի լրբութիւնը շարժեց սիրահարի նախանձը: Կռիւը սկսուեց: Մի փոքր խեղդեցին մէկ-մէկու, մի փոքր քաշեցին միմեանց փետուրները: Մինչ նրանք այս պատերազմի մէջ էին, էգը օգուտ քաղեց խռովութիւնից եւ դուրս փա-